



86 տարեկան հասակում կյանքից հեռացավ ականավոր գիտնական, մեծ հայագետ, գիտության կազմակերպիչ, հասարակական գործիչ, ակադեմիկոս Սեն Սուրենի Արևշատյանը: Նա իր ողջ կյանքը նվիրաբերել է հայոց միջնադարյան փիլիսոփայության ու հոգևոր մշակույթի բազմակողմանի ու հայեցակարգային ուսումնասիրության, ազգային հոգևոր արժեքների տարածման հայրենասիրական գործին: Իր լայնածավալ ու հիմնարար ուսումնասիրությունների շնորհիվ նա մեծ հեղինակություն է ձեռք բերել ոչ միայն Հայաստանում, այլև միջազգային ասպարեզում:

Հայոց փիլիսոփայության պատմությունը՝ իբրև ինքնուրույն գիտաճյուղ, սկիզբ է առել 1940-50-ականներին վաստակաշատ գիտնականներ Վ.Կ. Չալոյանի և Հ.Հ. Գաբրիելյանի աշխատությունների շնորհիվ: Նրանց հաջողվեց առանձնացնել հայոց փիլիսոփայության պատմության հիմնախնդրային դաշտը, մասամբ վեր հանել և ուսումնասիրել պատմական անցյալում կուտակված փիլիսոփայական հարուստ նյութը, նշմարել հայ փիլիսոփայական մտքի առնչությունները այլ ժողովուրդների փիլիսոփայական ժառանգությանը (անտիկ, միջնադարյան, նորեվրոպական), դրա ինքնատիպ բնույթն ու կարևորությունը համաշխարհային փիլիսոփայության պատմության տեսանկյունից:

Հայոց փիլիսոփայության պատմության ձևավորման և զարգացման երկրորդ փուլում, մի կողմից, տեղի է ունենում հետազոտությունների ընդարձակում, մյուս կողմից՝ դրանց խորացում: Այս փուլում հատկապես առանձնանում են Սեն Արևշատյանի հիմնարար աշխատությունները, որոնք թերևս նշանավորեցին հայ փիլիսոփայության պատմության՝ իբրև ինքնարավ գիտաճյուղի ձևավորման ավարտը և սկզբնավորեցին դրա զարգացման նոր փուլը:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1971), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի երկարամյա տնօրեն Սեն Արևշատյանը ծնվել է 1928 թ. Երևանում: Արժաթե մեդալով ավարտել է Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցը (1945) և գերագանցության դիպլոմով՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը (1951), ապա ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրա՝ մասնագիտանալով հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ: 1954 - 1959 թթ. նա աշխատել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնում: Համատեղության կարգով հետազայում ևս շարունակել է աշխատել ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված միջնադարյան խոշորագույն իմաստասեր և բարոնապետ Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների վերլուծությանը: 1959 թ. նա նշանակվում է Հին ձեռագրերի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) սկզբնաղբյուրների գիտական թարգմանության բաժնի վարիչ, 1973 թ.՝ Հին ձեռագրերի ուսումնասիրության և հրատարակման բաժնի վարիչ, իսկ 1982 թ.՝ տնօրեն: 1971 թ. նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ նվիրված Հին Հայաստանում փիլիսոփայական գիտության ձևավորման վերլուծությանը: 1982 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ:

Ս. Արևշատյանի գիտական գործունեությունը ընդգրկում է հայոց փիլիսոփայության պատմության բնագավառի ուսումնասիրության գրեթե բոլոր հիմնական ուղղությունները.

1. հայ փիլիսոփայական, բնագիտական ու գեղագիտական հուշարձանների համահավաք գիտական տեքստերի պատրաստում,
2. միջնադարյան հայ փիլիսոփայության հուշարձանների թարգմանություն ռուսերեն և վերածում ժամանակակից հայերենի,
3. առանձին ականավոր հայ փիլիսոփաների հայացքների վերլուծություն,
4. առանձին պատմամշակութային դարաշրջանի տեսական մտքի հետազոտություն,
5. տարբեր անթոլոգիական հրատարակություններում Հայաստանի բաժինների նախապատրաստում, թարգմանություն:

Այսպիսով, Ս. Արևշատյանը իր գործունեության մեջ փայլուն կերպով զուգակցում է փիլիսոփայության պատմաբանի, աղբյուրագետի, տեքստաբանի և թարգմանչի հմտությունները: Իր հիմնարար հետազոտություններով նա փաստորեն ստեղծեց հայոց փիլիսոփայության պատմության

աղբյուրագիտական հիմքը, էպպես ազդեց դրա գիտական չափանիշների, հետազոտական սկզբունքների մշակման ու բյուրեղացման վրա:

Ս. Արևշատյանի տեքստաբանական և թարգմանական լայն գործունեության շնորհիվ գիտական շրջանառության մեջ են դրվել հայ և համաշխարհային գիտափիլիսոփայական մշակույթի բազմաթիվ հուշարձաններ. «Հերմիա եռամեծի առ Ասկլեպիոս սահմանք» (ռուս.), Ջենոն Բնաստասերի «Յադագս բնութեան» (ռուս.), Հովհան Ռոտունեցու «Հավաքեալ ի բանից իմաստասիրաց» (ռուս.), Հովհաննես Երզնկացու «Բ տաճկաց իմաստասիրաց գրոց բանք», Անանուն հեղինակի «Մեկնություն ստորոգութեանցն Արիստոտելի» (ռուս.), Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն» (ռուս.) աշխատությունները:

Նա կազմել, թարգմանել և ծանոթագրել է «Արևելյան երկրների երաժշտական էսթետիկա» և «Համաշխարհային փիլիսոփայության անթոլոգիա» (Ս., 1967) անթոլոգիական հրատարակությունների հայկական բաժինները: Դրանց միջոցով Խորհրդային Միության ռուսալեզու գիտական հասարակայնությունը հնարավորություն ունեցավ ծանոթանալու հայոց փիլիսոփայության և էսթետիկայի պատմության կարևոր նվաճումներին:

Ս. Արևշատյանը բացառիկ դեր խաղաց V-VI դդ. հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության ճշգրտման, քննական տեքստերի պատրաստման, ռուսերեն և աշխարհաբար թարգմանելու չափազանց ծանր, բայց և երևելի գործում: 1960-1976 թթ. նա հրատարակել է Դավիթ Անհաղթի երեք երկասիրության քննական բնագրեր՝ ռուսերեն թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով. 1. «Սահմանք իմաստասիրութեան» (Ե., 1960), 2. «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի» (Ե., 1967), 3. «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի» (Ե., 1976): Այս երկերը գիտնականը հրատարակեց նաև աշխարհաբար թարգմանությամբ (Ե., 1980): 1975 թ. Մոսկվայում «Փիլիսոփայական ժառանգություն» հայտնի մատենաշարով նա լույս ընծայեց Դավիթ Անհաղթի հիշյալ աշխատություններից բաղկացած հատորյակը ռուսերենով, ինչը վերահրատարակվեց 1980 թ. մեծ փիլիսոփայի ծննդյան 1500-ամյակի առիթով: Նույն 1980 թ. Ս. Արևշատյանը լույս ընծայեց Դավիթ Անհաղթի գրչին պատկանող չորս փիլիսոփայական երկասիրությունների քննական բնագրերը: Հատորյակը, բացի նշված երեք երկերից, ընդգրկում է նաև «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի» արժեքավոր աշխատությունը, ինչը էպպես լրացրեց ու ամբողջացրեց Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգությունը:

Միաժամանակ, Ս. Արևշատյանը գիտակցում էր, որ քրիստոնեական աշխարհում կրոնակեղեցական ու գաղափարական սուր պայքարի, տարբեր գաղափարախոսական հոսանքների բախման շրջանում Դավիթ Անհաղթը հազիվ թե կարողանար շրջանցել դավանաբանության հիմնահարցերը, առավել ևս, որ դավանաբանական-աստվածաբանական վեճերի ժամանակ լայնորեն օգտագործվում էր փիլիսոփայական-տրամաբանական անտիկ զինանոցը: Գիտնականի հետագա աղբյուրագիտական հետա-

գոտությունները հաստատեցին այդ ենթադրությունը: Փաստագրական լուրջ տվյալների հիման վրա նա հանգեց այն եզրակացության, որ Կեղծ-Դիոնիսիոս Արեսպագացու անունով պահպանված հայտնի փիլիսոփայա-կան-աստվածաբանական երկերի ժողովածուն (չորս տրակտատներ և տասը նամակ) ոչ թե առանձին հեղինակի, այլ կոլեկտիվ աշխատանքի արդյունք է, ավելին, երկու՝ «Երկնային քահանայապետության մասին» և «Եկեղեցական քահանայապետության մասին» երկերը պատկանում են Դավիթ Անհաղթի գրչին:

Սույն գիտական վարկածը հետազոտական նոր հեռանկար է բացում բյուզանդագիտության ու հայագիտության առջև: Մասնավորապես, դա հիմք է ստեղծում Դավիթ Անհաղթի գրավոր ժառանգության հետագա ճշգրտման, նրա աշխարհայացքի նորովի գնահատման, համաշխարհային հոգեմտավոր և գաղափարաբանական կյանքում ունեցած տեղի և դերի պարզաբանման համար:

Որոշ գիտնականներ ժամանակին իրավամբ նշել են, որ Դավիթ Անհաղթի հոբելյանի տոնակատարությունը միջազգային մասշտաբով, որը վերածվեց համազգային ու միջազգային մշակութային երևույթի, թերևս Ս. Արևշատյանի 25-ամյա մանրագնին ու քրտնաջան գիտական աշխատանքի արգասիքն է: Այս տոնակատարությունը կարծես պսակեց Ս. Արևշատյանի գիտական գործունեության մի ամբողջ ուղղություն, ժամանակաշրջան, վերջնականապես գիտականորեն վավերացրեց հայոց փիլիսոփայության պատմության՝ որպես ինքնուրույն գիտաճյուղի «քաղաքացիության» իրավունքը և նոր հեռանկարներ բացեց հետագա ուսումնասիրությունների համար:

Չափազանց մեծ է Ս. Արևշատյանի դերը Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության, միջնադարյան բազմաթիվ գիտափիլիսոփայական և այլ կարգի հուշարձանների հեղինակների, գրության ժամանակի, թարգմանական հուշարձանների ճշգրտման հարցում: Այս ուղղությամբ կատարած հետազոտությունները բացառիկ նշանակություն ունեն ոչ միայն հայագիտության, այլև միջնադարագիտության համար առհասարակ:

Ս. Արևշատյանը մեծ ներդրում ունի նաև միջնադարյան հայ փիլիսոփայության պատմության առանցքային խնդիրների, ականավոր փիլիսոփաների հայացքների համակողմանի գիտական վերլուծության մեջ: Այս առումով կարևորվում են նրա հետևյալ հետազոտությունները. «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները» (ռուս., Ե., 1957), «Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում (V-VI դդ.)» (ռուս., Ե., 1973), «Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմության շուրջ» (ռուս., Ե., 1980), «Դավիթ Անհաղթ» (ռուս., Ս., 1980, հայ., Ե., 1980), «Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (Ս. Մաթևոսյանի համահեղինակությամբ, հայ. և ռուս., Ե., 1984) և այլն:

Մեծ գիտնականը հատուկ չի անդրադարձել փիլիսոփայության պատմության մեթոդաբանության մշակման հարցերին: Սակայն մի-

անգամայն ուշագրավ է այն հանգամանքը, որ նրա մենագրական բոլոր հետազոտությունները խարսխված են որոշակի գիտական հայեցակարգի վրա: Այլ կերպ ասած՝ թեև նա չի թողել շարադրած մեթոդաբանական հայեցակարգ, այնուհանդերձ, կարելի է վստահորեն պնդել, որ նրա մենագրությունները՝ իրականացված մեթոդաբանություն են: Այս առումով առանձնանում է «Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում (V-VI դդ.)» հիմնարար մենագրությունը, որտեղ փիլիսոփայական մտքի զարգացման ու փիլիսոփայական գիտության ձևավորման գործընթացը վաղ միջնադարյան Հայաստանում վերլուծվում է պատմամշակութային գործընթացի ընդհանուր համատեքստում՝ որպես արտաքին գործոնների ազդեցությամբ առաջացած համամշակութային շարժման բաղկացուցիչ մաս: Այդ ամենի շնորհիվ էլ նրան հաջողվել է ստեղծել այդ բարդ, հակասական և բազմանիստ պատմամշակութային գործընթացի գիտական պատկերը:

Ս. Արևշատյանը մասնակցել է հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմաճյուղային ստեղծմանը՝ տալով V-XVIII դդ. փիլիսոփայության պատմության շարադրանքը:

Վերջին տարիներին ակնափոր գիտնականը իր ներուժը հիմնականում կենտրոնացրել է Vդ. հայ մատենագրության, հատկապես աստվածաբանական-փիլիսոփայական մտքի կարևորագույն հուշարձանների թարգմանությունների վրա: Ք. Տեր-Դավթյանի հետ նա բնագրից թարգմանեց ռուսերեն Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» (Ե., 2004), ապա Սուրբ Գրիգորի «Վարդապետությունը»՝ աշխարհաբար (Ե., 2007), Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» հոշակավոր երկը՝ ռուսերեն (Ե., 2008), Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում» ճառերը՝ ռուսերեն (Ե., 2011): Հարկ է հիշատակել նաև Հովհաննես Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» և Սարգիս Բերիացու «Յաղագս աշխարհի և այլ մասնավոր իրաց» աշխատությունների գիտական բնագրերի հրատարակումը (Ե., 2009 և 2011): Նշված բնագրերն ու թարգմանությունները, ինչպես նաև ներածական հոդվածներն ու ծանոթագրությունները մեծ ներդրում են հայոց փիլիսոփայության պատմության ուսումնասիրության փաստագրական հիմքի ստեղծման առումով:

Որպես գիտական գործունեության ինքնուրույն ուղղություն կարելի է դիտել Ս. Արևշատյանի գիտախմբագրական աշխատանքները: Նա եղել է հայոց փիլիսոփայության, իրավունքի, պատմության, բժշկագիտության և այլ ոլորտների հուշարձանների ռուսերեն թարգմանությունների գիտական խմբագիր, որպիսիք են Հովհան Որոտնեցու «Վերլուծութիւն ստորոգութեանցն Արիստոտելի», Վահրամ Բաբունու «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի», Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք», Եղիշեի «Վարդանանց պատմությունը» և այլն, ինչպես նաև մի շարք մենագրական աշխատություններ:

Սեն Արևշատյանը լավագույնս ներկայացրել և տարածել է հայոց փիլիսոփայության և առհասարակ հայ մշակույթի նվաճումները ոչ միայն իր

գիտական հետազոտությունների, այլև բազմաթիվ միջազգային և համամիութենական գիտաժողովներում (Սիրիա, Լիբանան, Հորդանան, Լեհաստան, Ֆրանսիա և այլն) ունեցած ելույթների ու զեկույցների շնորհիվ:

Ս. Արևշատյանի բազմակողմանի և բեղմնավոր գիտական գործունեության շնորհիվ հայոց փիլիսոփայության պատմությունը ամրապնդեց իր տեղը հայագիտության և հասարակական գիտությունների համակարգում, ավելին՝ ստացավ համամիութենական և միջազգային ճանաչում: Նրա ավելի քան 170 գիտական աշխատությունները, այդ թվում՝ շուրջ 40 մենագրություններն ու գրքերը ոչ միայն հայոց փիլիսոփայության պատմության, այլև արդի հայագիտության հիմնարար և մնայուն արժեքներից են:

Մեծ գիտնականը կյանքից հեռացավ որպես իսկական գիտնական, կարելի է ասել՝ գրիչը ձեռքին՝ ավարտին հասցնելով իր վերջին աշխատությունը՝ սպագրության պատրաստելով Բարդուղեմեոս Բոլոնիացուն նվիրված ուսումնասիրությունը, որտեղ զետեղված է նաև վերջինիս «Յաղագս հնգից ընդհանրից» գրվածքը: Ս. Արևշատյանի «Բարդուղեմեոս Բոլոնիացու Հայկական ժառանգությունը» աշխատությունը հրատարակում է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը, ինչը հաճելի անակնկալ է գիտնականի ծննդյան (հունվարի 7) նախօրեին:

ՄԻՐՈՒՄՅԱՆ Կ.Ա.

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր